

ՀԱՍՏԱՏՈՒԾ ԵՄ

Տնօրեն՝

<< >>



2022թ.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

## ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

## ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արագածոտնի մարզ, գ. Աղձք

---

Աղձքի միջն. դպրոց 12-րդ դասարան

---

ուսումնական հաստատության անվանումը, դասարան  
Հակոբյան Արմինե Գաբրիելի

---

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

<<2022-2023>> ուսումնական տարի

**ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

V. ՄԻԶՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակաձում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման,

համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով,

դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և

գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջհետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումնային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. զերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) Ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Մույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, զթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**<<Հայաստանի Հանրապետության պետական  
հանրակրթական ուսումնական հաստատություն>>,  
պետական ոչ առևտրային կազմակերպության  
(կրճատումով)**

**42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)**

- ա) դաստիարակալական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
  - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը,
  - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
  - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
  - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
  - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
  - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

**73. Սովորողն իրավունք ունի՝**

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
  - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
  - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
  - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
  - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
  - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տեղեկություններ աշակերտների մասին \_\_\_\_\_ 2-3

Կրթարդարացիության աշխատանքների շտաբի կողմից իրականացվող ուղղորդումները \_\_\_\_\_ 4-9

Դասագրքերի բաշխումը \_\_\_\_\_ 10-11

Դասարանի մասնակցությունը չմասդրոնացման,  
սարքավորման եւ մարզման մեթոդաբանական \_\_\_\_\_ 12

աշակերտների մասնակցությունը նախադասարան,  
գեղարվեստական, երաժշտական և այլ խմբակներին \_\_\_\_\_ 13

Դասղեկի արդարացիության աշխատանքների թեմատիկական \_\_\_\_\_ 14

Դասղեկի աշխատանքները յուրաքանչյուր դասարանում,  
սոցիալապես անբարեկեղծ վիճակում գտնվող, Ծնողազուրկ աշակերտների շեժ \_\_\_\_\_ 15

Դասղեկի անհատական \_\_\_\_\_ 16

Ծնողական ժողովներ, աշխատանք Ծնողների շեժ \_\_\_\_\_ 17

աշխատանք Ծնողանոցների շեժ \_\_\_\_\_ 18

Դասարանի բնութագրի ուսումնական ակտիվի \_\_\_\_\_ 19

Նշումները եւ դիտարկումները չմասդ \_\_\_\_\_ 20



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

համար	հասցեն	Հեռախոսի համարը	Ծնողի (ինամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	Ծանոթություն
1	գ. Աղձք 8փ., 1 փակ., 2տ.	093-21-76-58	մենատնտես	լավ	
2	գ. Աղձք 1 փ., 58տ	077-11-00-37	մենատնտես	լավ	
3	գ. Աղձք 1փ., 55տ.	077-13-57-70	մենատնտես	լավ	
4	գ. Աղձք 1փ., 67տ.	077-04-86-87	մենատնտես	լավ	
5	գ. Աղձք 16փ., 10տ.	077-76-49-48	ՀՀ ճանապ. Ոստ.	լավ	
6	գ. Աղձք 22փ., 4տ.	093-33-90-15	Աղձքի միջն. Դպր.	լավ	
7	գ. Աղձք 12փ/, 15 տ.	098-47-14-16	մենատնտես	լավ	
8	գ. Աղձք 19փ., 4տ.	094-14-19-31	մենատնտես	լավ	
9	գ. Աղձք 13փ., 8տ.	077-02-22-48	մենատնտես	լավ	
10	գ. Աղձք 16փ., 2տ.	093-25-89-20	մենատնտես	լավ	
11	Գ. Աղձք 5փ. 1տ	077-07-91-10	մենատնտես	լավ	
12	գ. Աղձք 1փ., 98տ.	077-70-90-73	մենատնտես	լավ	
13					
14					
15					
16					
17					
18					
19					
20					
21					
22					

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) 12-րդ դասարանում սովորում է 12 աշակերտ՝ 5 աղջիկ և 7 տղա:

Ձևավորվել է համերաշխ դասարանական կոլեկտիվ: Առաջադիմությունը լավ է, դասարանում սովորում է 4 հարվածային աշակերտ, երեխաները ակտիվորեն մասնակցում են բաց դասերին, դասարանական և համադպրոցական միջոցառումներին, օգտվում են գրադարանից, կատարում դասղեկի, ուսուցիչների և տնօրինության բոլոր հանձնարարությունները:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Կազմել դասարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների պլանը:
2. Անցկացնել դասարանական և ծնողական ժողովներ, ընտրել դասարանի ակտիվ, ծնողական խորհրդի անդամների և նախագահ:
3. Հետևել աշակերտների հաճախումներին, առաջադիմությանը, արտաքին տեսքին, առկա հիգիենայի պարագաներին, գրենական պիտույքների և դասագրքերի առկայությանը:
4. Կազմակերպել աշակերտների արտադասարանական կյանքը:
5. Հետևել ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին
6. Այցելել երեխաների ծնողներին, կապ պահպանել նրանց հետ, քննարկել ծագող խնդիրները:
7. Խթանել սովորողների գեղագիտական, հոգևոր դաստիարակությունը



• ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն\_\_\_Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային վայրեր , հանդիպումներ Առագածոտնի թեմի հոգևոր հայրերի հետ , դաստիարակել սովորողներին որպես հայ առաքելական եկեղեցու հետևորդներ, որպես դարեր շարունակ իր կրոնի համար պայքարած ժողովրդի զավակներ: Ջերծ պահել երեխաներին մեր հասարակության մեջ տեղ գտած աղանդավորական շարժումներից : Կազմակերպել և մասնակցել եկեղեցական տոներին վերաբերող միջոցառումներին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն\_Հաճախակի այցելել թանգարաններ,թատրոն, համերգասրահներ, մշակութային այլ օջախներ:Կազմակերպել գրական երեկոներ, միջոցառումներ, զրուցել արվեստի մասին: Երեխաներին ծանոթացնել դասական երաժշտությանը, համաշխարհային և հայ հանճարների կենսագրություններին և գործունեությանը, ստեղծագործություններին: Դասարանը պետք է ակտիվ մասնակցի դպրոցում կազմակերպվող ցուցահանդեսներին,համերգներին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն , դիտել ռազմահայրենասիրական ֆիլմեր, բեմադրություններ, ռազմագիտության ուսուցչի հետ կազմակերպել էքսկուրսիա դեպի զինվորական ստորաբաժանումներ, այդտեղ զրուցել զիվորների , սպաների հետ, տեղում ծանոթանալ զինտեխնիկային: Անհրաժեշտ է դաստիարակել երեխաներին որպես ազատ և անկախ պետության քաղաքացիներ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Երեխաների հետ զրուցել հայ անվանի մարզիկների սպորտային հաջողությունների մասին,սերմանել սեր դեպի սպորտ ,խրախուսել սպորտով զբաղվող աշակերտներին: Դասարանում կան աշակերտներ, որոնք միջազգային մրցաշարերում գրանցել են լուրջ հաջողություններ, հաղթել են Հայաստանի առաջնություններում: Տիզկուլտուրայի ուսուցչի հետ համատեղ կազմակերպել սպորտային խաղեր, միջոցառումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտները պետք է հարգանք տածեն աշխատանքի, աշխատավոր մարդու հանդեպ, նրանք պետք է ակտիվորեմժն մասնակցեն իրենց տնային գործերին, օգնեն ծնողներին, մասնակցեն համադպրոցական շաբաթօրյակներին, դասարանի մաքրությանը: դաստիարակել սեր դեպի աշխատանք:

3.6 Բնապահպանական դաստիարակություն\_\_\_Երեխաներին բացատրել, որ մեր օրերում շատ կարևոր է շրջակա միջավայրի պահպանությունը, նրանք պետք է իմանան, թե ինչ ծանր հետևանքներ կարող է ունենալ օդի , միջազգային ջրային պաշարների , համաշխարհային օվկիանոսի ախտոտումը, երկրագնդի տարբեր մասերում իրականացվող ծառահատումները, կենդանիների անորինական ոչնչացումը: Սովորդները պետք է միշտ մաքուր պահեն իրենց շրջապատող բնությունը:

3.7 Դպրոց ընտանիք կապը\_Անհրաժեշտ է պահպանել սերտ կապը ծնողների հետ, այցելել երեխաների ընտանիքներ, ծանոթանալ նրանց սոցիալական վիճակին, այցելել հաճախակի բացակայող երեխաներին: Առանձին աշխատանք տանել վարքագծի խնդիրներ ունեցող, դժվար դաստիարակվող երեխաների հետ: Պետք է հաճախակի կազմակերպել ծնողխորհրդի նիստեր, ծնողական ժողովներ , հանդիպումներ դասավանդող ուսուցիչների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
1	Գիտելիքի օր	1÷2 սեպտեմբեր	Դասղեկ աշակերտներ
2	Նախորդ ուս տարվա արդյունքների վերլուծում, նոր ուս տարվա անելիքների ծրագրում: Ավագի ընտրություններ:	5÷9 սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
3	«Եթե ես լինեի...» թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	12÷16 սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
4	Մարդասիրական, պաշտպանված, անվտանգ, երկկողմանի պատասխանատվության միջավայրի գիտակցում	19÷23 սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
5	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	26÷30 սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
6	<<Իմ ուսուցիչը>> թեմայով զրույց:	3÷7 հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
7	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի	10÷14 հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ

	զարգացած:		
8	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	17÷21 հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
9	<< Բնական պաշարներ >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	31÷4 հոկտեմբեր, նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
10	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում >> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	7÷11 նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
11	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	14÷18 նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
12	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	21÷25 նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
13	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	28÷2 նոյեմբեր դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
14	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	5÷9 դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ

15	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	12÷16 դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
16	«Տարեմուտի խոհեր» ամանորյա նախապատրաստական աշխատանքներ	19÷23 դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
17	<< Ազգային և միջազգային տոներ >> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	9÷13 հունվար	դասղեկ աշակերտներ
18	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	16÷20 հունվար	դասղեկ աշակերտներ
19	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	23÷27 հունվար	դասղեկ աշակերտներ
20	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	30÷3 հունվար փետրվար	դասղեկ աշակերտներ
21	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	6÷10 փետրվար	դասղեկ աշակերտներ
22	<< Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ	13÷17	դասղեկ

	կարիքավոր մարդկանց նկատմամբ:	փետրվար	աշակերտներ
23	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները	20÷24 փետրվար	դասղեկ աշակերտներ
24	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:	27÷3 փետրվար մարտ	դասղեկ աշակերտներ
25	<< Նախապաշարումների ուստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	6÷10 մարտ	դասղեկ աշակերտներ
26	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	13÷17 մարտ	դասղեկ աշակերտներ
27	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	20÷24 մարտ,	դասղեկ աշակերտներ
28	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	3÷7 ապրիլ	դասղեկ աշակերտներ
29	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել	10÷14 ապրիլ	դասղեկ աշակերտներ

	բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:		
30	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	17÷21 ապրիլ	դասղեկ աշակերտներ
31	«Թերթելով մեր անցյալի էջերը» նպատակն է սերմանել հայրենասիրություն:	25÷28 ապրիլ	դասղեկ աշակերտներ
32	«Ընտանիքի օր» ներկայացնել ընտանիքի դերը և նշանակությունը, փոխադարձ հարգանքի և սիրո կարևորությունը:	2÷5 մայիս	դասղեկ աշակերտներ
33	«Շառլ Ազնավուր» կազմակերպել զրույց նվիրված աշխարհահռչակ հայորդուն:	8÷12 մայիս	դասղեկ աշակերտներ
34	«Մայիսյան եռատոն» կազմակերպել հայրենասիրական երգերի դադարներ:	15÷19 մայիս	դասղեկ աշակերտներ
35	Ամփոփել 2022-2023 ուսումնական տարին:	22÷26 մայիս	դասղեկ աշակերտներ







ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	Ծանոթություն
1-ին շաբաթ	Ինչ է պատասխանատվության զգացումը	
2-րդ շաբաթ	Ինչպես հաղթահարել ծուլությունը	
3-րդ շաբաթ	Հայաստան, ուզում եմ քեզ հայտնել իմ սերը	
4-րդ շաբաթ	Ինչ է հայրենասիրությունը	
5-րդ շաբաթ	Ուսուցիչ, որին ես շնորհակալ եմ այն բանի համար, որ...	
6-րդ շաբաթ	Արտագաղթը չարիք է	
7-րդ շաբաթ	Հայաստան, իմ հայրենիք	
8-րդ շաբաթ	Ամեն ինչ գիտեմ առողջության մասին	
9-րդ շաբաթ	Ընկերություն և ընկերասիրություն	
10-րդ շաբաթ	Կարողանում եմ արդյոք սիրել	
11-րդ շաբաթ	Ինչպես կյանքում հաջողության հասնել	
12-րդ շաբաթ	Ծնողներս ինձ համար, ես՝ ծնողներիս	
13-րդ շաբաթ	Աշխարհն իմ պատուհանից	
14-րդ շաբաթ	45 րոպե աշխարհի շուրջ	
15-րդ շաբաթ	Գալո՞ բարի, Նոր Տարի	
16-րդ շաբաթ	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը	
17-րդ շաբաթ	Ո՞վ է իսկական ընկերը	
18-րդ շաբաթ	Ինչպե՞ս նայել ճշմարտության աչքերին	
19-րդ շաբաթ	Ո՞վ է իմ իդեալը	
20-րդ շաբաթ	Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը	
21-րդ շաբաթ	Ո՞ր՞նք են տալիս Նոբելյան մրցանակ	
22-րդ շաբաթ	Իմ կատարած լավ գործերը	

23-րդ շաբաթ	Անհանդուրժողականության դրսևորումները	
24-րդ շաբաթ	Ժպիտը մարդու կյանքում	
25-րդ շաբաթ	Աշխարհն իմ պատուհանից	
26-րդ շաբաթ	Մեր երկրի հերոսական անցյալը	
27-րդ շաբաթ	Երաժշտությունը իմ կյանքում	
28-րդ շաբաթ	Ինչպես պահպանել Երկիր մոլորակը	
29-րդ շաբաթ	Եկեք զրուցենք	
30-րդ շաբաթ	Հայտնի հայ մարզիկները	
31-րդ շաբաթ	Ես և իմ շրջապատը	
32-րդ շաբաթ	Գեղեցիկը կփրկի աշխարհը	
33-րդ շաբաթ	Հայաստանի այն վայրերը, որտեղ կուզեի լինել	
34-րդ շաբաթ	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում	



ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

համար	Նախապիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական Երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				



















**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.
- 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
- 3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
- 4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը ննպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության բազայից.

4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

- 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈԴՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈԴՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈԴՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դաստիարակի աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դաստիարակի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:
2. Դաստիարակի աշխատանքային տարեկան ծրագիրը կազմվելիս նպատակահարմար է հաշվի առնել՝
  - դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
  - Աշակերտների գործունեության կազմակերպման գույակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
  - դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
  - ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
  - աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատեսությունը,

- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասողեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասողեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասողեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և <<հանձնեց>> սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասողեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասողեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը: